# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 017/3-26

<<05>>__փետրվարի_2026թ                                  ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

***Պատվիրատու՝ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ԳՐԱՆԴ ԻՆՍՓԵՔՇՆ>> ՍՊԸ***

***Տնօրեն՝ Գ. ԲԱՔԱՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Բերդաշեն գյուղի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ **12 633.50** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Սիրեկանյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Բերդաշեն գյուղի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր</u>

*Պատվիրատու՝ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ԳՐԱՆԴ ԻՆՍՓԵՔՇՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Գ. ԲԱԲԱՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Բերդաշեն գյուղի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ փոսորակի հորատում, խճի նախապատրաստական շերտի իրականացում, հենասյունների բետոնե հիմքերի կառուցում, հողային աշխատանքների իրականացում թափոնակույտում, շինարարական աղբի բարձում և տեղափոխում: Մետաղական հենասյունների տեղադրում և երկշերտ յուղաներկում, հողանցման իրականացում: Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա և երկշերտ յուղաներկում: Խարսխային հենարանների վրա հաղորդալարի մոնտաժում: Արտաքին փողոցային լուսավորության LED լուսատուների տեղադրում և մալուխների անցկացում: Մետաղական արկղի մոնտաժում, միաֆազ և եռաֆազ սարքավորումների մոնտաժում մետաղական արկղում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով Հաշվարկը կազմում է՝ **12 633.50** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2508.12** և մեքենաների շահագործման ինդեքսը **3069.63**

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N 12 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան***

***Փորձագետ Տ. Վիրաբյան***